

Երկու հարիւրի մօտ տուն կայ: Այս գումարը տասնետուրով բազմապատկելով՝ կ'ունենանք երեք հազար վեց հարիւր հոգի: Տէր Աստուած աճեցուցէ եւ բազմացուցէ:

Ներքին բերքն է ընտիր հայհոյութիւն:

ԺԹ.

ՀԱՍԳԻԻՂ

Այս գիւղն իրաւունք ունի պարծենալու այն մեծ տուններովն, որոնց մէջ ամիրաներ կրնակէին ժամանակաւ եւ որք այժմ զօրանոց եղած են մուկերու: Հարկ չէ, կարծենք, կրկնել, թէ ամիրաներու յաջորդեցին մուկերն, եւ հետեւապէս, մուկերը կգործեն այժմ՝ ինչ որ կգործէին երբեմն ամիրաները:

Կենդանութեան նշան տուած ըլլալու համար միայն այս թաղը միշտ շարժման մէջ է. շարժում՝ որ կկայանայ թաղական փոխելու, հոգաբարձութիւն ընտրելու, դասատու փոխելու եւ երբեմն ալ պատրիարք փոխելու մէջ:

Թաղեցին միապետութեամբ կկառավարուէր՝ երբ Բարմաք Քաբուի բնակիչները թաղականի պաշտօն կը վարէին: Ուրիշ փողոցներու բնակիչները չէին կարող թաղական ընտրուիլ. որովհետեւ Բարմաք Քաբուի աղաներն, վեց տարի թաղականութիւն ընելէն ետքը, երբ օրինաւորապէս հրաժարէին՝ իրենց գահաժառանգ զաւակները կբազմեցունէին այն աթոռին վրայ, որ թաղական կկոչուի եւ որուն վրայ նստիլ շատերը կփափաքին: Իսկ երբ Պօղոս պատրիարքին օրով մեծ յեղափոխութիւն տեղի ունեցաւ՝ միապետական կառավարութիւնն փոխուեցաւ հանրապետականի: Այս թուականէն ի վեր կօշկակարներն եւ ջրհանկիրներն են, որ մեծ ազդեցութիւն կբանեցունեն թաղականի ընտրութեան վրայ: Միապետական կառավարութեան ատեն թաղականը վեց տարի պաշտօն կը վարէր եւ չէր գործեր ոչինչ, իսկ հանրապետութեան ատեն թաղական մը հինգ օրէն աւելի չէ կարող պաշտօն վարել:

Թաղեցին արդարեւ կշարժի՝ բայց երբ գայն շարժող գտնուի. եթէ ինք իր գլխուն ձգելու ըլլաս՝ տարիներով կքնանայ: Թաղիս մէջ շարժող երիտասարդներ շատ կը գտնուին, երբ խնդիրն այնպիսի բանի մը վրայ ըլլայ՝ որու մէջ անձնական կիրք շատ գտնուի եւ դպրոց բնաւ չգտնուի: Երբեմն Ներսէսեան վարժարանն ընկերներուն նախանձը կյուզէր, իսկ այսօր ընկերներուն վրայ նախանձելու տրամադիր է: Ժամանակաւ գեղին հրեաներէն եւ տաճիկներէն աշակերտ կ'ընդունէր, իսկ այսօր անոնց